ՀՈՒՆԻՍ 2019

ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ

VEOLIA
Ջուր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ 4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում 5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղափոխում 14
1.3. Ջրահեռացման համակարգ 14
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում 15
1.5. Էներգահամակարգ 16
1.6. Մեքենա-մեխանիզմներ 19

2. Առևտրային տնօրինություններ 20
2.1. Բաժանորդների տվյալներ 21
2.2. Հասույթ 21
2.3. Գանձում 24
2.4. Դեբիտորական պարտքեր 24
2.5. Ջրաչափեր 26
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում 27

3. Տեխնիկական տնօրինություն 28
3.1. Ջրամատակարարման շարունակականություն 29
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում 31
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ 33
3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ 34
3.5. Ջրատար համակարգի բարելավում 34

4. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ 36
4.1. Համակարգչային ցանց 37
4.2. Ինտերակտիվ համակարգ 37

5. Լրատվական ծառայություն 38

6. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն 40
6.1. Փաստաթղթերի մշակում 41
6.2. Դասընթացներ /սեմինարներ 41
6.3. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում 42

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում շահագործման տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարարորոնողական և ջրագծերի վերակառուցման, ինչպես նաև ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված բազմաթիվ աշխատանքներ: Վերջիններիս հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև:

Քաղաք Երևան

- Մալխասյանց 12/2 հասցեում շահագործումից հանվել է D=100 մմ L=130 մ քայքայված խողովակ, ինչի արդյունքում խնայվել է Q=2.0 լ/վ ջրաքանակ: Իսկ Քոչար 11 հասցեում շահագործումից հանվել է D=100 մմ L=30 մ քայքայված խողովակ, ինչի արդյունքում խնայվել է Q=8.0 լ/վ ջրաքանակ:

Մալխասյանց 12/2 հասցեի ջրամատակարարման սխեմա

Քոչար 11 հասցեի ջրամատակարարման սխեմա

- Շարունակելով ցանցի բարելավման աշխատանքները՝ Փափազյան-Արծրունի խաչմերուկում շահագործումից հանվել է D=150 մմ L=400 մ, D=100 մմ L=15 0մ և D=50 մմ L=50 մ քայքայված ջրագիծ, ինչի արդյունքում խնայվել է Q=4.0 լ/վ ջրաքանակ:

Փափազյան փողոցի ջրամատակարարման սխեմա

- Ագաթանգեղոսի փողոց 7 հասցեում իրականացված վթարարորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և D=100 մմ պողպատե խողովակի ճեղքի զոդման միջոցով վերացվել է գաղտնի վթար: Վերանորոգվել է նաև դիտահորում գտնվող D=100 մմ փականը և արդյունքում խնայվել է մոտ Q=3.0 լ/վ ջրաքանակ:
- Մ. Խորենացու փողոց 27, 29 և 49 հասցեներում հայնաբերվել և D=100 մմ, D=25 մմ, D=20 մմ և D=15 մմ ջրագծերի խցափակման միջոցով վերացվել է թվով 4 գաղտնի վթար, որի արդյունքում խնայվել է մոտ Q=4.0 լ/վ ջրաքանակ:

Քաղաք Գյումրի

- Քաղաքի Օղակային փողոցում ջրագծի վրա արձանագրված վթարի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ ջրագիծը սնուցել է նախկին տնակային տարածքին, որի բնակիչները երկար տարիներ այլևս այդտեղ չեն բնակվում: Ուստի որոշվեց տվյալ ջրագիծը խցափակման միջոցով դուրս հանել շահագործումից, ինչի արդյունքում տնտեսվեց Q=0.8 լ/վ ջրաքանակ:

Օղակային փողոցի ջրամատակարարման սխեմա

Անտառավան 3 թաղամաս 18Գ շենքի բնակիչներից ահազանգ էր ստացվել, որ վթարվել է հարակից փողոցով անցնող ջրագիծը, և ջուրն անարգել հոսում է ամբողջ փողոցով և շենքի բակով: Շիրակ տեղամասի վթարավերականգնողական խումբը, շտապ հասնելով դեպքի վայր և սկսելով հողային աշխատանքները, պարզեց, որ վթարվել է D=100 մմ տրամագծով պողպատե խողովակը: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ խողովակը նախկինում սնուցել է հարակից թաղամասը, որտեղ մի քանի տարի է ինչ բնակիչներ այլևս չկան: Ուստի որոշվեց այն խցափակել և հանել շահագործումից, ինչի շնորհիվ խնայվեց Q=0.7 լ/վ ջրաքանակ:

Անտառավան 3 թաղամասի ջրամատակարարման սխեմա

Խորենացի փողոցի (209 տարածք) ջրամատակարարման սխեմա

Մովսես Խորենացի փողոցին հարակից 209 տնակային տարածքի մի հատվածում, նախկին շին. բանավանի տնակները ապամոնտաժելուց և տարածքի հարթեցման աշխատանքների ընթացքում ի հայտ էին եկել բազմաթիվ փոքր վթարներ: «Շիրակ» տեղամասի և գոտիավորման բաժնի աշխատակիցների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ վթարները տեղի են ունեցել նախկին տնակների ջրագծերի վրա: Տարածքը ամբողջությամբ հին ջրագծերից մաքրելու համար հարկավոր էր գտնել սնուցման աղբյուրը և այն խցափակել: Աշխատանքների արդյունքում շահագործումից հանվեց D=63 մմ L=85 մ և D=50 մմ L=90 մ խողովակաշար՝ խնայելով Q=0.6 լ/վ ջրաքանակ:

Շչեդրին 5 շենքի բնակիչներից ահազանգ էր ստացվել, որ շենքի վերին հարկերում ջրի ճնշումը շատ թույլ է, իսկ նկուղները ամբողջությամբ ջրի մեջ են: Տեղի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ շենքը սնուցող ջրագիծն ամբողջությամբ մաշված և քայքայված լինելու հետևանքով բազմաթիվ գաղտնի վթարների պատճառ էր դարձել: Շենքի անխափան և մշտական ջրամատակարարումը վերականգնելու նպատակով որոշում կայացվեց փոխել սնուցող խողովակաշարը: Կառուցվեց D=40 մմ L=75 մ և D=32 մմ L=30 մ պոլիէթիլենային ջրագիծ, ինչն ապահովեց խնդրի արմատական լուծումը:

Շչեդրին 5 շենքի ջրամատակարարման սխեմա

Քանի որ քաղաքի արևելյան հատվածով անցնող Օղակային ջրագիծը ևս անցնում է 225 տնակային տարածքի հարևանությամբ, որոշվեց փոխել 225 տարածքի սնուցման աղբյուրը և այն դարձնել Օղակային ջրագծից՝ միացնելով թաղամասի ընդհանուր ցանցին: Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվեց D=250 մմ L=1600 մ՝ խնայելով Q=20.0 լ/վ ջրաքանակ:

225 տնակային տարածքի ջրամատակարարման սխեմա

Քաղաք Վանաձոր

Չուխաջյան թաղամասի ջրամատակարարման սխեմա

Քաղաքի Չուխաջյան թաղամասի 20 շենքի մոտակայքով անցնող խողովակը կառուցվել է նախորդ դարի կեսերին և ամբողջությամբ հնամաշ ու քայքայված լինելու պատճառով կրկնվող վթարների պատճառ էր դառնում: Հետագա շահագործման բարդություններից խուսափելու և խնդիրը լուծելու նպատակով նորով փոխարինվեց D=89 մմ խողովակաշարը, որի արդյունքում խնայվեց Q=1.0 լ/վ ջրաքանակ:

Քաղաք Էջմիածին

Վազգեն Սարգսյան-Հ.Դանոյան փողոցների խաչմերուկում շահագործումից հանվել է D=150 մմ L=800 մ քայքայված, հետագա շահագործման համար ոչ պիտանի և սպասարկման տեսանկյունից խնդրահարույց խողովակշարը, ինչի արդյունքում բարելավվել է վերը նշված փողոցի ջրամատակարարումը, ցանցը դարձել է կառավարելի և խնայվել է Q=1.0 լ/վ ջրաքանակ:

Վ. Սարգսյան փողոցի ջրամատակարարման սխեմա

Վ.Մամիկոնյան փողոցի ջրամատակարարման սխեմա

Վ. Մամիկոնյան-Սպանդարյան փողոցների խաչմերուկում շահագործումից հանվել է D=100 մմ L=500 մ թուջե խողովակաշար, ինչի արդյունքում ցանցում կարգավորվել է ջրի ճնշումը:

Քաղաք Աբովյան

Քաղաքի 4-րդ մ/շ 71 շենքի մոտ գոտիավորման բաժնի կողմից կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ նշված հատվածում D=250 մմ պողպատե խողովակի վրա առկա է գաղտնի վթար: Վթարավերականգնողական աշխատանքների իրականացումից հետո բարեավվել է նշված փողոցի ջրամատակարարումը և խնայվել Q=17.0 լ/վ ջրաքանակ:

Արգնի գյուղի ջրամատակարարման սխեմա

Քաղաք Արտաշատ

Իրականացված վթարորոնողական աշխատանքների և չափումների արդյունքում Լանջազատ և Վանաշեն գյուղերում հայտնաբերվել և D=50 մմ ու D=40 մմ ջրագծերի վրա ճեղքերի զոդման միջոցով վերացվել է թվով 2 գաղտնի վթար, որի արդյունքում խնայվել է Q=4.0 լ/վ ջրաքանակ:

Քաղաք Իջևան

Երևանյան փողոցում՝ թանգարանի մոտակայքում, փոխարինվել է վթարված D=200 մմ ջրագծի L=110 մ հատվածը նոր պոլիէթիլենային խողովակով, ինչի արդյունքում խնայվել է Q=2.3 լ/վ ջրաքանակ:

Երևանյան փողոցի ջրամատակարարման սխեմա

Քաղաք Սևան

Սևան-Գավառ D=500 մմ ջրատարը, որի երկարությունը կազմում է մոտ L=40 կմ, սնուցում է թվով 7 համայնք՝ Գավառ տեղամասի կողմից սպասարկվող Լճափ, Բերդկունք, Հայրավանք, Ծովազարդ և Սևան տեղամասի կողմից սպասարկվող Նորաշեն, Չկալովկա, Լճաշեն համայնքները:

Նորաշեն համայնքի ջրբաշխիչ դիտահորում տեղադրված փականային հանգույցը, որը հանդիսանում է Գավառ-Սևան տեղամասերի բաժանարար կետ, գտնվում էր վթարային վիճակում, ինչի հետևանքով հանգույցում առկա էր ավելցուկային P=5 մթն ճնշում, իսկ ջրատարի վրա առաջացած վթարի դեպքում ջրազրկվում էին բոլոր 7 համայնքները:
«Սևան» տեղամասի աշխատակիցների կողմից հանգույցում տեղադրված թվով 2 D=400 մմ և թվով 2 D=250 մմ վթարված փականները ապամոնտաժվել են և մոնտաժվել է նոր փականային հանգույց՝ թվով 3 D=200 մմ փական և թվով 1 D=200 մմ ճնշման կարգավորիչ փական:

Քաղաք Սիսիան

- Սիսիան-Գորիս հատվածում «Մուխուրթուրյան» D=500 մմ ջրատարի վրա առկա վթարները վերացնելու նպատակով «Վայք», «Սիսիան» և «Գորիս» շահագործման տեղամասերի աշխատակիցների կողմից իրականացվել են լայնածավալ աշխատանքներ:
Մուխուրթուրյան-Աշոտավան ջրատարի միացման տեղում տեղադրվել է D=80 մմ ճնշման կարգավորիչ փական, փոխարինվել է D=100մմ L=4 մ երկարության պողպատե քայքայված խողովակը, տեղադրվել է D=50 մմ օդահեռ փական և վերանորոգվել է D=200 մմ ջրթափ փականը: Ջրարբիացման համակարգերում փոխարինվել է D=20 մմ և D=25 մմ թվով 5 անսարք փական: Իրականացված աշխատանքների արդյունքում տնտեսվել է Q=55.0 լ/վ ջրաքանակ:

- Վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում Սիսիան քաղաքում և Գետափ թաղամասում D=270 մմ պողպատե ջրագծի վրա հայտնաբերվել և «Սիսիան» շահագործման տեղամասի աշխատակիցների կողմից ճեղքերի զոդման միջոցով վերացվել է թվով 4 վթար, որի արդյունքում տնտեսվել է Q=35 լ/վ ջրաքանակ:



Քաղաք Սպիտակ

Ոփյան փողոցում D=90 մմ ջրագծի L=252մ վթարված հատվածը փոխարինվել է նոր պոլիէթիլենային խողովակով, ինչի արդյունքում տնտեսվել է Q=1.5 լ/վ ջրաքանակ: Իսկ Սուրբ Նշանի (նախկին զինմասի) մոտակայքով անցնող D=300 մմ թուջե խողովակը վթարվել էր: Խողովակի վթարված հատվածը ժայռային գոտում լինելու պատճառով անհրաժեշտություն առաջացավ շահագործումից հանել L=100 մ հատվածը և նոր միացում տալ զուգահեռ անցնող D=500 մմ խողովակից՝ հետագա շահագործման խնդիրներից խուսափելու համար:

Ոփյան փողոցի ջրամատակարարման սխեմա

Սուրբ Նշանի (նախկին զինմաս) ջրամատակարարման սխեմա

Քաղաք Վարդենիս

«Վարդենիս» ՕԿՋ-ն, որը գտնվում էր անմխիթար վիճակում՝ պատերը քայքայված էին և առկա էին ճաքեր, վերանորոգման ենթակա չէր: Տեղամասի աշխատակիցների կողմից չոր խցում իրականացվել է մուտքի և ելքի ջրագծերի միացում D=150 մմ L=5 մ երկարության խողովակով՝ շրջանցելով ջրամբարը: Արդյունքում՝ «Վարդենիս» ՕԿՋ-ն հանվել է շահագործումից և տնտեսվել է Q=5.0 լ/վ ջրաքանակ:

Քաղաք Ծաղկաձոր

Չարենցի փողոցի հանգստյան տան դիմաց շահագործումից հանվել է D=125 մմ L=80 մ քայքայված խողովակ, որի արդյունքում խնայվել է Q=1.5 լ/վ ջրաքանակ:

Չարենցի փողոցի ջրամատակարարման սխեմա

Ծովազարդ համայնք

«Գավառ» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Ծովազարդ գյուղում գոտիավորման խմբի աշխատակիցների կողմից իրականացված վթարաորոնողական աշխատանքների և չափումների արդյունքում հայտնաբերվել և D=63 մմ պոլիէթիլենային խողովակի վրա կցամասերի տեղադրման միջոցով վերացվել է գաղտնի վթար, որի արդյունքում տնտեսվել է Q=4.0 լ/վ ջրաքանակ:

Կարմիրգյուղ համայնք

Համայնքում գտնվող և գյուղը սնող D=100 մմ ջրագծի վրա «Գավառ» տեղամասի աշխատակիցների կողմից տեղադրվել է D=100 մմ ճնշման կարգավորիչ փական, որի միջոցով գոտիավորման խմբի աշխատակիցները կատարել են ցանցի կարգավորում, և արդյունքում տնտեսվել է Q=6.0 լ/վ ջրաքանակ:

Գյուլագարակ և Հոբարձի համայնքներ

Գյուլագարակ և Հոբարձի գյուղերի ջրամատակարարման սխեմա

Համայնքը սնուցող ջրագծի պարբերաբար կրկնվող վթարների պատճառով անհրաժեշտ եղավ փոխարինել D=160 մմ L=127 մ հատվածը, որի արդյունքում խնայվեց Q=3.0 լ/վ ջրաքանակ: Իսկ Հոբարձի գյուղը սնուցող ջրագիծը, որը կառուցվել է խորհրդային տարիներին, կրկնվող վթարների պատճառ էր դառնում: Ուստի այն փոխարինվեց D=89 մմ L=30 մ նոր խողովակով՝ արդյունքում տնտեսելով 1.5լ/վ ջրաքանակ:

Մերձավան համայնք

Համայնքի Երևանյան փողոցի ՕԿՋ-ի հարևանությամբ փոխարինվել է D=80 մմ L=24 մ վթարված խողովակի հատված, ինչի արդյունքում խնայվել է Q=0.5լ/վ ջրաքանակ:

Մերձավան համայնքի ջրամատակարարման սխեմա

Գեղանիստ համայնքի ջրամատակարարման սխեմա

Համայնքի 10-րդ փողոցում ջրամատակարարման ցանցում ի հայտ եկած ճնշումային խնդիրները լուծելու նպատակով D=76 մմ վթարված մետաղական ջրագծի L=60 մ վթարված հատվածը փոխարինվել է D=63 մմ պոլիէթիլենային խողովակով:

Հունիս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարած աշխատանքները հակիրճ նկարագրվում են ստորև ներկայացված Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	*Չափման միավոր*	*Քանակ*
Չափում հոսքաչափով	տեղ	1,762
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	29,624
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	16,973
Հոսակորուստի որոնում կորելյատորով	մ	2,460
Ջրաչափական հանգույնցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	31
Շահագործումից հանված ջրագիծ	մ	6,504
Կառուցված ջրագիծ	մ	3,787
Կառուցված կոյուղագիծ	մ	404
Վերացված գաղտնի վթարներ	հատ	44
Փոխարինված փական	հատ	250
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	635
Մաքրված դիտահոր	հատ	422
Գաղտնի վթաների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	124
Վերացված վթարներ		
Ջրամատակարարման ցանցում	հատ	1,653
Ջրահեռացման ցանցում	հատ	3,714
Պոմպակայաններում	հատ	159
Մաքրված անձրևընդունիչ	հատ	490

Հունիս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2՝ Վերացված վթարների հակիրճ նկարագիր

h/h	*Տեղամաս*	*Պոլիէթիլենային խողովակներ*	*Մետաղական խողովակներ*	*Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ*
1	Արաբկիր	13	59	0
2	Զեյթուն	2	41	0
3	Մաշտոց	1	42	0
4	Շահումյան	2	48	0
5	Ալավերդի	9	23	0
6	Բերդ	7	6	0
7	Նոյեմբերյան	16	19	0
8	Իջևան	9	18	0
9	Ստեփանավան	8	18	0
10	Տաշիր	16	2	0
11	Ապարան	5	14	0
12	Լոռի	72	30	0
13	Շիրակ	119	102	0
14	Արթիկ	55	22	0
15	Սպիտակ	14	10	0
16	Թալին	8	6	0
17	Աշոցք	4	6	0
18	Էջմիածին	22	40	0
19	Աշտարակ	14	28	0
20	Հրազդան	8	5	0
21	Չարենցավան	9	16	0
22	Աբովյան	5	3	0
23	Կենտրոն	4	59	19
24	Հյուսիս	0	19	93
25	Հարավ	7	47	17
26	Էրեբունի	4	80	25
27	Արմավիր	1	52	16
28	Արտաշատ	43	29	37
29	Արարատ	19	3	63
30	Մասիս	36	30	49
31	Գավառ	39	15	81
32	Սևան	7	12	28
33	Մարտունի	2	12	4
34	Վարդենիս	2	12	13
35	Ճամբարակ	0	2	4
36	Դիլիջան	10	11	35
37	Վայք	2	0	13
38	Եղեգնաձոր	13	3	9
39	Ջերմուկ	1	3	2
40	Սիսիան	9	24	22
41	Գորիս	3	18	18
42	Կապան	14	25	19
43	Մեղրի	1	4	8
	Ընդամենը	635	1,018	575

Վերոնշյալ աղյուսակը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակահատվածում գրանցված 2,228 վթարների 26 %-ը վերաբերում է Երևանին, իսկ 74 %-ը՝ մարզերին, ընդ որում

- Երևանում գրանցված 428 վթարների (ընդհանուրի 26 %) 8 %-ը կազմում են պոլիէթիլենային, իսկ 92 %-ը՝ մետաղական խողովակների վրա տեղի ունեցած վթարները:
- մարզերում գրանցված 1,225 վթարների (ընդհանուրի 74 %) 49 %-ը կազմում են պոլիէթիլենային, իսկ 51 %-ը՝ մետաղական խողովակների վրա տեղի ունեցած վթարները:

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հունիս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3 Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									
	15	20	25	32	40	50	65	80	100	Ընդամենը
Տեղադրված	312	22	5	1	4	1	0	1	1	347
Փոխարինված	120	27	3	0	2	0	0	0	1	153
Տեղափոխված	2	0	0	0	0	0	0	0	1	3
Տեխ. Ակտ	98	27	3	2	1	2	0	0	0	133
Ընդամենը	532	76	11	3	7	3	0	1	3	636

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 636 ջրաչափ: Կատարված աշխատանքների 84 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հունիս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև՝ Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4՝ Աշխատանքների հակիճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում հատ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	1,310	183	0
2	Մաշտոց	1,810	201	6
3	Շահումյան	1,510	133	13
4	Զեյթուն	290	134	0
5	Շիրակ	480	449	24
6	Ալավերդի	1,530	21	0
7	Ապարան	0	15	202
8	Արթիկ	150	76	12
9	Աշոցք	0	4	0
10	Բերդ	0	7	0
11	Իջևան	1,205	52	5
12	Լոռի	2,480	178	1
13	Նոյեմբերյան	257	17	12
14	Սպիտակ	100	21	0
15	Ստեփանավան	60	28	0
16	Թալին	0	17	0
17	Տաշիր	180	6	0
18	Էջմիածին	0	129	0
19	Չարենցավան	680	92	4
20	Աբովյան	2,595	77	0
21	Հրազդան	1,710	112	0
22	Աշտարակ	1,985	26	0
23	Կենտրոն	160	252	42
24	Հյուսիս	400	237	55
25	Հարավ	0	289	0
26	Էրեբունի	0	179	24
27	Արմավիր	650	84	0
28	Արտաշատ	0	61	0
29	Արարատ	75	55	0
30	Մասիս	90	37	4
31	Գավառ	0	48	0
32	Սևան	0	92	0

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում
		մ	հատ	գծ/մ
33	Մարտունի	0	18	0
34	Վարդենիս	0	10	0
35	Ճամբարակ	150	18	0
36	Դիլիջան	0	37	0
37	Վայք	90	16	0
38	Եղեգնաձոր	360	9	0
39	Ջերմուկ	0	17	0
40	Սիսիան	450	82	0
41	Գորիս	0	30	0
42	Կապան	0	67	0
43	Մեղրի	0	36	0
	Ընդամենը	20,757	3,652	399

Վերոնշյալ աղյուսակը ցույց է տալիս, որ հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր առմամբ կատարված աշխատանքների 29 %-ը վերաբերում է Երևանին, իսկ 71 %-ը՝ մարզերին:

1.4. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալները.



- Սևանի N3 կոյուղու պոմպակայանի հակադարձ փականը շարքից դուրս էր եկել, ինչի հետևանքով մղված կոյուղաջուրը ցանցից ետ էր գալիս և կարող էր վնասել պոմպը: Աշխատակիցների կողմից փականը փոխարինվել է՝ ապահովելով պոմպակայանի անխափան աշխատանքը: Սևանի N3 և N5 կոյուղու պոմպակայաններում խոշոր մասնիկների հավաքման զամբյուղները, որոնք քայքայվել էին և իրենց ֆունկցիան չէին կատարում, պատրաստվել և տեղադրվել են:

- Դիլիջանի կոյուղու մաքրման կայանում օդամուղներից մեկի աշխատանքը խափանվել էր: Ուսումնասիրման արդյունքում պարզ է դարձել, որ ռոտորի ածխե թիակները կոտրվել են և խցանվել: Աշխատակիցների կողմից փոխարինվել են ռոտորի ածխե թիակները և օդի ֆիլտրերը, զննվել են նաև բոլոր սարքավորումները և ներկայումս օդամուղները աշխատում են անխափան:

- Վարդենիսի կոյուղու մաքրման կայանում զննվել են բոլոր կոնվեյերների պոլիէթիլենային պատյանները, ինչպես նաև բոլոր սարքավորումները:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե՛ էլեկտրական, թե՛ մեխանիկական), կատարվել են կարգավորումներ: Ստորև Աղյուսակ 5-ում ներկայացված են մանրամասներ:

Աղյուսակ 5՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը	Մաքրված կեղտաջրերի ծավալը	Կեղտաջրից առանձնացած կեղտ
			մ³	մ³	տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	70,954	19.8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	71,217	23.4
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	160,949	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	141,920	10.8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	110,698	20.7
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	15,350	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	11,143	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	17,800	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	18,100	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	7,177	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6՝ Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

հ/հ	Հասցեն	Աշխատանքների նկարագիրը
1	Ազատության 11/1 - 65	Պոմպի աշխատանքի կարգավորում
2	Վ. Վաղարշյան 1 - 19	Պոմպի աշխատանքի կարգավորում
3	Ազատության 11ա 66	Պոմպի աշխատանքի կարգավորում
4	Վ. Վաղարշյան 1 - 64	Պոմպի աշխատանքի կարգավորում
5	Ա.Խաչատրյան 26/1	բանող անվի տեղադրում 1 հատ, խցուկի տեղադրում 1 հատ, շարժիչի վերանորոգում 1 հատ, առանցքակալի տեղադրում 2 հատ
6	Կոմիտաս 48/1	պոմպի աշխատանքի կարգավորում
7	Վ. Վաղարշյան 1	պոմպի աշխատանքի կարգավորում
8	Գյուլբենկյան 2/1 - 24	ցածր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, խցուկի տեղադրում 2 հատ
9	Սոսե 2	պոմպի աշխատանքի կարգավորում, էլ. սարքերի զննում կարգավորում
10	Արծրունի 90	բարձր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ, ցածր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ
11	Կոմիտաս 1	պոմպի աշխատանքի կարգավորում
12	Կոմիտաս 8	պոմպի աշխատանքի կարգավորում
13	Հակոբյան 12	պոմպի աշխատանքի կարգավորում
14	Գյուլբենկյան 29ա	պոմպի աշխատանքի կարգավորում
15	Էմին 5,7	պոմպի աշխատանքի կարգավորում
16	Ադոնց 13	պոմպի աշխատանքի կարգավորում
17	Մամիկոնյանց 40	պոմպի աշխատանքի կարգավորում
18	Արղության 29	պոմպի աշխատանքի կարգավորում
19	Մամիկոնյանց 23/1 - 53	էլ. սարքերի զննում կարգավորում
20	Դեմիրճյան 27	պոմպի աշխատանքի կարգավորում
21	Բաղրամյան 25	պոմպի աշխատանքի կարգավորում
22	Հ. Էմինի 80 - 28	բարձր ճնշման ռելեի նորոգում 2 հատ, թողարկիչի տեղադրում 1 հատ, բաքի միացման դետալներ 1 հատ, շարժիչի վերանորոգում 1 հատ
23	Արաբկիր 51փ.	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, պոմպի աշխատանքի կարգավորում
24	Կոմիտասի 2 շ	պոմպի աշխատանքի կարգավորում
25	Մամիկոնյանց 23/1 - 53	պոմպի աշխատանքի կարգավորում
26	Կոմիտաս 12շ	պոմպի աշխատանքի կարգավորում
27	Կոմիտաս 7/1շ	պոմպի աշխատանքի կարգավորում
28	Մամիկոնյանց 23/1 - 53	թողարկիչի տեղադրում 1 հատ, վերանորոգման հավաքածուի տեղադրում 1 հատ, լիսեռի տեղադրում 1 հատ
29	Կոմիտասի 45/1	պոմպի աշխատանքի կարգավորում
30	Վ. Վաղարշյան 1 - 30	էլ. սարքերի զննում կարգավորում
31	Կոմիտաս 7/1շ	շարժիչի վերանորոգում 1 հատ, խցուկի տեղադրում 1 հատ, առանցքակալի տեղադրում 2 հատ
32	Մամիկոնյանց 36/1	պոմպի աշխատանքի կարգավորում
33	Կոմիտասի 42 - 17	պոմպի աշխատանքի կարգավորում
34	Ա. Ավետիսյան 70 - 128	պոմպի աշխատանքի կարգավորում
35	Բարբյուս 65 - 14	պոմպի աշխատանքի կարգավորում
36	Համբարձումյանի 16/1 - 17	պոմպի աշխատանքի կարգավորում
37	Համբարձումյանի 97	պոմպի աշխատանքի կարգավորում
38	Ա. Ավետիսյանի 70 - 128	պոմպի աշխատանքի կարգավորում
39	Տոլբուխին 34	պոմպի աշխատանքի կարգավորում
40	Մամիկոնյանց 36/1	պոմպի աշխատանքի կարգավորում
41	Ադոնցի 17	պոմպի աշխատանքի կարգավորում
42	Կոմիտասի 45/1 - 16	առանցքակալի տեղադրում 4 հատ, թողարկիչի տեղադրում 2 հատ, ավտոմատիկայի կառավարիչ 1 հատ, բարձր ճնշման ռելեի նորոգում 2 հատ, ցածր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, շարժիչի վերանորոգում 1 հատ
43	Գյուլբենկյան 29ա	պոմպի ապամոնտաժում 1 հատ
44	Վրացական 6 շ	ցածր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ
45	Դ. Դեմիրճյանի 40 շ	
46	Պարոնյանի 28 - 105	պոմպի աշխատանքի կարգավորում
47	Կոմիտասի 40 շ 40բն	պոմպի աշխատանքի կարգավորում
48	Բաղրամյան 1նրբ. 14շենք	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, բարձր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ, վերանորոգման հավաքածուի տեղադրում 1 հատ,

h/h	Պոմպակայանների հասցեն	Աշխատանքների հակիրճ նկարագիրը
		ցածր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ
49	Աղբ.Սերոբ 11ա	պոմպի աշխատանքի կարգավորում
50	Կոմիտասի 2	պոմպի աշխատանքի կարգավորում
51	Կոմիտասի 8	պոմպի աշխատանքի կարգավորում
52	Կոմիտասի 50	պոմպի աշխատանքի կարգավորում
53	Հակոբյան 1	պոմպի աշխատանքի կարգավորում
54	Օրբելի 18	ցածր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ, փականի տեղադրում տր=25 մմ, 1 հատ
55	Բարբյուս 63	ցածր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ, վերանորոգման հավաքածուի տեղադրում 1 հատ
56	Ա. Ավետիսյանի 70 - 128	բարձր ճնշման ռելեի փոխարինում 2 հատ, բաքի միացման դետալներ 1 հ.
57	Հր. Քոչար 18 - 41	պոմպի աշխատանքի կարգավորում
58	Կոմիտասի 50 - 47	պոմպի աշխատանքի կարգավորում, (շարունակելի)
59	Կոմիտասի 50 - 45	բարձր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ, Ֆազի բացակայության ռելե 1 հատ, ցածր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ
60	Սարյան 29	պոմպի աշխատանքի կարգավորում
61	Մամիկոնյանց 29 - 27	պոմպի աշխատանքի կարգավորում
62	Կոմիտասի 44 - 68	պոմպի աշխատանքի կարգավորում
63	Վ. Վաղարշյան 1 - 45	պոմպի աշխատանքի կարգավորում
64	Սոսե 2-րդ նրբ. 8շ	պոմպի աշխատանքի կարգավորում
65	Համբարձումյան 18	պոմպի աշխատանքի կարգավորում
66	Համբարձումյան 97	պոմպի աշխատանքի կարգավորում
67	Սունդուկյանի 23 - 41	պոմպի աշխատանքի կարգավորում
68	Վահր. Փափազյանի 11 - 39	պոմպի աշխատանքի կարգավորում
69	Սոսե 2-րդ նրբ. 8 - 24	պոմպի աշխատանքի կարգավորում
70	Ազատության 11 - 39	պոմպի աշխատանքի կարգավորում
71	Սոսե 2-րդ նրբ. 8 -35	էլ. սարքերի զննում կարգավորում
72	Արծրունի 90	պոմպի աշխատանքի կարգավորում, բարձր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ
73	Մամիկոնյանց 29	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, բարձր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ, վերանորոգման հավաքածուի տեղադրում 1 հ.
74	Կոմիտաս 45/1	պոմպի աշխատանքի կարգավորում
75	Փափազյան 11	պոմպի աշխատանքի կարգավորում
76	Ն. Տիգրանյանի 7 - 12	պոմպի աշխատանքի կարգավորում
77	Ազատության 11 - 9	պոմպի աշխատանքի կարգավորում
78	Ազատության 11/1 - 65	պոմպի աշխատանքի կարգավորում
79	Քանաքեռ Հէկ	պոմպի աշխատանքի կարգավորում
80	Հ.Էմին 80	պոմպի աշխատանքի կարգավորում
81	Կոմիտաս 14	էլ. սարքերի զննում կարգավորում
82	Կոմիտաս 44 - 17	պոմպի աշխատանքի կարգավորում
83	Քանաքեռ ՀԷԿ	պոմպի աշխատանքի կարգավորում
84	Կոմիտասի 2	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, պոմպի աշխատանքի կարգավորում
85	Կոմիտասի 45/1 - 58	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, պոմպի աշխատանքի կարգավորում
86	Ն.Դուման 5	էլ. սարքերի զննում կարգավորում , պոմպի վերանորոգում 1 հատ
87	Սարյան 24	պոմպի աշխատանքի կարգավորում
88	Կոմիտասի 45/1	պոմպի աշխատանքի կարգավորում
89	Գրիբոյեդով 4 - 50	պոմպի աշխատանքի կարգավորում
90	Կոմիտասի 40-34	պոմպի աշխատանքի կարգավորում
91	Գրիբոյեդով 2,4	առանցքակալի տեղադրում 4 հատ, վերանորոգման հավաքածուի տեղադրում 1 հատ, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, լիսեռի փոխարինում 1 հատ
92	Զարյան 3	պոմպի աշխատանքի կարգավորում
93	Վրացական 6 շ	էլ. սարքերի զննում կարգավորում
94	Հ. Էմինի 6	պոմպի աշխատանքի կարգավորում, ցածր ճնշման ռելեի փոխարինում 1 հ.
95	Ազատության 11 - 37	պոմպի աշխատանքի կարգավորում
96	Ահարոնյան 5,7շշ	Պոմպի աշխատանքի կարգավորում
97	Կ. Ուլնեցու 51	Պոմպի աշխատանքի կարգավորում
98	Ռուբինյանց 23/1	պոմպի աշխատանքի կարգավորում
99	Դրոյի 28 - 10	պոմպի աշխատանքի կարգավորում, էլ. սարքերի զննում կարգավորում
100	Թբիլիսյան 1,2	պոմպի աշխատանքի կարգավորում
101	Դրոյի 28	պոմպի աշխատանքի կարգավորում
102	Ազատության 6	պոմպի աշխատանքի կարգավորում
103	Ահարոնյան 2	պոմպի աշխատանքի կարգավորում

հ/հ	Պոմպակայանների հասցեն	Աշխատանքների հակիրճ նկարագիրը
104	Զովունի 9 փ 125	առանցքակալի տեղադրում 2 հատ, բանող անվի տեղադրում 1 հատ
105	Մարգարյան 7	պոմպի աշխատանքի կարգավորում
106	Հալաբյան 9/1	պոմպի աշխատանքի կարգավորում
107	Մարգարյան 7	ավտոմատիկայի կառավարիչ 1 հատ, ցածր ճնշման ռելեի փոխարինում 1 հ.
108	Հալաբյան 48	պոմպի տեղադրում 1 հատ
109	Գ. Պռոշյան 5 փ 18 նրբ 27/1 Տ	պոմպի աշխատանքի կարգավորում
110	Հալաբյանի 38 - 50(Մարգարյան 7)	փականի տեղադրում տր=50 մմ, 1 հատ, եռաֆազ թողարկչի փոխարինում 1 հատ, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից
111	Սիլիկյան թաղ.	պոմպի աշխատանքի կարգավորում
112	Շինարարներ 15/1	պոմպի աշխատանքի կարգավորում
113	մ.Կոտայք ք.Բյուրեղավան փախստականների թաղամաս	Պոմպի աշխատանքի կարգավորում
114	մ.Կոտայք ք.Բյուրեղավան	պոմպի աշխատանքի կարգավորում
115	մ.Կոտայք գ.Ակունք	էլ. հոսանքի լարերի նորոգում երկ=0 մ
116	ք.Էջմիածին Վաղարշապատ թաղ	էլ. սարքերի զննում կարգավորում , պոմպի աշխատանքի կարգավորում
117	մ.Արմավիրք.Էջմիածին Շահումյան69	լիսեռի տեղադրում 1 հատ, բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ
118	մ.Արագածոտն գ.Կոշ	ցածր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, ժամային ռելեյի տեղադրում 1 հատ
119	մ.Արագածոտն գ.Կոշ	էլ. սարքերի զննում կարգավորում
120	մ.Արագածոտն ք. Աշտարակ, Աշտարակի քլորակայան	էլ. սարքերի զննում կարգավորում
121	մ.Կոտայք գ.Սոլակ	էլ. սարքերի զննում կարգավորում
122	մ.Կոտայք ք.Չարենցավան պ/կ	էլ. հոսանքի լարերի նորոգում երկ=0 մ
123	մ.Կոտայք գ.Քաղսի	էլ. հոսանքի լարերի նորոգում երկ=0 մ
124	մ. Կոտայք, գ.Քաղսիի պոմպակայան	պոմպի աշխատանքի կարգավորում
125	մ.Լոռի ք.Ստեփանավան	խցուկի տեղադրում 1 հատ
126	մ.Լոռի ք.Ստեփանավանի	պոմպի աշխատանքի կարգավորում
127	Ռ. Մելիքյանի 2/2 - 32	բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, թողարկիչի տեղադրում 1 հատ, շարժիչի վերանորոգում , առանցքակալի տեղադրում 1 հատ, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից
128	Ռ. Մելիքյանի 2/3 - 35	խցուկի տեղադրում 2 հատ
129	Սեբաստիա 141	պոմպի աշխատանքի կարգավորում
130	Շրջանային 2/5	պոմպի աշխատանքի կարգավորում
131	Սեբաստիա 25 - 26	Պոմպի աշխատանքի կարգավորում
132	Լենինգրադյան 31-20	պոմպի աշխատանքի կարգավորում
133	Լեբնինգրադյան 31/6, 31/8ՇՇ	պոմպի աշխատանքի կարգավորում
134	Սեբաստիա 141/3 - 38	շարժիչի վերանորոգում 1 հատ, (շարունակելի)
135	Ռաֆֆի 45 - 53	էլ. սարքերի զննում կարգավորում
136	Սեբաստիա 141/3 - 38	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, բարձր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ, առանցքակալի տեղադրում 1 հատ, եռաֆազ թողարկչի տեղադրում 1 հատ
137	մ.Լոռի ք.Սպիտակ Տոխուլաշեն	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, Պոմպի աշխատանքի կարգավորում
138	մ.Լոռի ք.Սպիտակ Տոխուլաշեն	Պոմպի աշխատանքի կարգավորում
139	մ.Լոռի ք.Սպիտակ Գերմանական թ.	պոմպի տեղադրում 1 հատ
140	ք. Վանաձոր, Նովոսելցովո ջրամբար	պոմպի տեղադրում 1 հատ
141	մ.Լոռի, ք. Վանաձորի պոմպակայան	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, պոմպի աշխատանքի զննում կարգավորում, ՆՑ
142	գ.Սարչապետ	Պոմպի աշխատանքի կարգավորում
143	մ.Լոռի, Թեղուտի պոմպակայան	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, Պոմպի աշխատանքի կարգավորում
144	մ.Լոռի, գ.Կարմիր Աղեգ	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, թողարկիչի տեղադրում 1 հատ
145	Ֆրունզե 6	Էլ.մալուխի վերանորոգում
146	Բրյուսով 165	Ֆազային պաշտպանության ռելեի աշխատանքի կարգավորում
147	Վեղի տեղամաս	Էլ. հաղորդակով փականի ժամանակի ռելեի աշխատանքի կարգավորում
148	Ջրվեժ գյուղ	Պոմպի վերանորոգում և տեղադրում
149	Նոր Արեշ 99/1	Պոմպակայանում ճնասված d=50մմ ֆիլտրի փոխարինում 1հատ
150	Նորագյուղ պ/կ	Պոմպի մուտքագծի թուջե սողնակի մոնտաժում d=80մմ
151	Ավան	Հոսքաչափի ճնասված հաղորդալարի նորոգում
152	Վրացյան 71	Էլ. սնուցման մալուխի նորոգում
153	Արարատյան Զոդ և ՕԿԶ	ՕԿԶ-ում մակարդակաչափիչի ստուգում
154	Ազատամարտիկների 78-80	d=50մմ փականի փոխարինում 1 հատ
155	Նորագյուղ	Պոմպի էլ. վահանակի ապամոնտաժում և մոնտաժում նախկին պոմպակայանում

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Հունիսին իրականացվել են մեքենա-մեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել և պատրաստվել են հետագա շահագործման համար:

Ընդհանուր առմամբ աշխատանքներ են կատարվել ավելի քան 100 մեքենա-մեխանիզմի վրա՝ տարբեր ընթացային մասերի փոխարինում նորերով, շարժիչի հիմական և մասնակի նորոգում, առջևի և հետևի համակարգերի նորոգում, և այլն: Փոխարինվել են շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, զտիչներ և անտիֆրիզ, ինչպես նաև անվադողեր և մարտկոցներ:
Նորոգվել, փոխարինվել և հավասարակշռվել են անվադողեր:

Կատարված աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմերն աշխատում են անխափան, ինչը նպաստում է համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները ժամանակին վերացնելու խնդրի լուծմանը:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Ս.թ. ապրիլից կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ՄՏԱՏ սպասարկման տարածքներից՝ Աբովյան, Էջմիածին, Մասիս և Ապարան տեղամասերը դարձան ԵՏԱՏ սպասարկման տարածքներ՝ մոտ 65,000 բաժանորդներով:

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: Գործընթացի առավել աղյունավետ կազմակերպման համար ԵՏԱՏ-ում ներգրավվել են 259, իսկ ՄՏԱՏ-ում՝ 62 պայմանագրային աշխատակից: 01.07.2019 թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏԱՏ-ում 314,793, իսկ ՄՏԱՏ-ում՝ 166,016 պայմանագիր.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	2018թ. հունվար - 2019թ. հունիս ամիսներին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	423,319	302,405	71.4
		Իրավաբանական անձ	19,282	12,388	64.2
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	206,907	159,918	77.3
		Իրավաբանական անձ	8,435	6,227	73.8
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	630,226	462,323	73.4
		Իրավաբանական անձ	27,717	18,615	67.2

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հունիս ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	461,437	353,849	76.7
		Իրավաբանական անձ	22,495	15,870	70.5
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	253,439	166,788	65.8
		Իրավաբանական անձ	9,803	6,989	71.3
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	714,876	520,637	72.8
		Իրավաբանական անձ	32,298	22,859	70.8

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն):
ԵՏԱՏ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 358 նոր բաժանորդ, իսկ ՄՏԱՏ սպասարկման տարածքում՝ 162 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ

Սպառման ծավալների ավելացման նպատակով շարունակվում են կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև ԵՏԱՏ-ի «Շենգավիթ», «Հյուսիս», «Շահումյան» և ՄՏԱՏ-ի «Լոռի», «Շիրակ» տեղամասերի սպասարկման տարածքների բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակագ և ավելի զգայուն ջրաչափերով:
Իրավաբանական անձանց ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը:
Բոլոր փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հունիս ամսվա ընթացքում ԵՏԱՏ-ում ստուգաչափվել է 3,667, իսկ ՄՏԱՏ-ում՝ 1,355 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 06.2019
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	2,333	987	190	3,510
		Իրավաբանական անձ	82	72	6	160
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	654	529	88	1,271
		Իրավաբանական անձ	50	28	6	84
	Ընդամենը		3,119	1,616	290	5,025

Ստուգաչափված ջրաչափ (Երևան)



Ստուգաչափված ջրաչափ (Մարզեր)



Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել 278,748 մ^3 վերահաշ-վարկված հասույթ (84 %՝ Երևան և 16 %՝ մարզեր):

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2019թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)



Հունիսին ընկերության առևտրային տնօրինությունների կողմից ձևավորած հասույթի առաջադրանքի կատարողական ցուցանիշները բերված են ստորև աղյուսակի տեսքով.

Տարածաշրջան	*Առաջադրանք հազ.մ³*	*Փաստացի հազ.մ³*	*Տարբերություն %, հազ.մ³*
Երևան	7,926	8,585	8.31
Մարզեր	2,983	3,139	5.22
Ընդամենը	10,909	11,724	7.47

Ստորև բերված գրաֆիկում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալների վերաբերյալ տվյալները.

Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Երևան)



Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Մարզեր)



2.3. ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Հունիս ամսին գանձումը ԵՏԱՏ-ում կազմել է 1,278,933 մլն դրամ (75 %), իսկ ՄՏԱՏ-ում՝ 416,331 մլն դրամ (25 %):
Նախորդ ամսվա ձևավորած հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:
Ընկերության ձևավորած հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Գանձում	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս
Երևան	Առաջադրանք/մլն դրամ	1,111,564	1,068,993	1,023,278	1,136,162	1,200,614	1,250,688
	Հավաքագրում/մլն դրամ	961,127	1,066,773	1,207,447	1,265,886	1,383,789	1,278,933
	%	86	100	118	111	115	102
Մարզեր	Առաջադրանք/մլն դրամ	485,310	528,579	519,889	519,889	459,526	529,347
	Հավաքագրում/մլն դրամ	394,761	428,304	489,054	446,494	435,710	416,331
	%	81	81	94%	86	95	79
Ընդամենը	Առաջադրանք/մլն դրամ	1,596,874	1,597,572	1,543,167	1,656,051	1,660,140	1,780,035
	Հավաքագրում/մլն դրամ	1,355,888	1,495,077	1,696,502	1,712,379	1,819,499	1,695,264
	%	85	94	110	103	110	95

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Առևտրային տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Հունիս ամսվա ընթացքում ԵՏԱՏ կողմից կնքվել է թվով 222 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 15.63 մլն դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏԱՏ կողմից՝ թվով 76 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 4.0 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը՝ ըստ քանակի և գումարի (այս մասով մայիսի ամսական հաշվետվությամբ ներկայացված տվյալները ներառում էին նաև հունիս ամիսվա տվյալները):

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2019 թ. հունիսը ներառյալ		Բավարարված		Մերժված		2017-2019 թթ. ընթացիկ գործեր		2017-2019 թթ. ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
3,892	567,034,458	3,061	378,241,517	85	7,472,210	4,689	860,828,143	1,546	128,481,985

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 79 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 2 %-ը մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	*Պարտքը 01.07.2019թ. դրությամբ (մլն. դրամ)*	*Այդ թվում մարտ ամսվա հասույթ (մլն դրամ)*
Երևանի տարածաշրջան, *այդ թվում*	3,974.08	1,589.26
Բնակիչ-բաժանորդներ	2,744.90	1,009.83
Իրավաբանական անձեր	1,229.18	579.44
Մարզերի տարածաշրջան, *այդ թվում*	1,710.74	522.48
Բնակիչ-բաժանորդներ	1,330.02	384.50
Իրավաբանական անձեր	380.72	137.97
Ընդամենը, *այդ թվում*	5,684.82	2,111.74
Բնակիչ-բաժանորդներ	4,074.92	1,394.33
Իրավաբանական անձեր	1,609.90	717.41

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏԱՏ սպասարկման տարածքում շուրջ 223.6 մլն դրամը կուտակվել է երեք բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը, «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը և Կոնդի Առանձնատների Տնտեսություն ՊՈԱԿ-ը:

ՄՏԱՏ մասով հանրապետական բյուջեի պարտքը 01.07.2019թ. դրությամբ կազմում է մոտ 97.0 մլն դրամ (Պաշտպանության նախարարություն, Ոստիկանություն, ԱԻՆ և այլն), որը կվճարվի առաջիկայում:

2019 թ.դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Երևան)



2019 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.07.2019 թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	447,227	352,224	78.8	21,912	15,865	72.4
	Առանց ջրաչափի	14,210	1,625	11.4	583	5	0.9
Մարզեր	Ջրաչափով	231,021	165,194	71.5	9,535	6,985	73.3
	Առանց ջրաչափի	22,418	1,594	7.1	268	4	1.5
Ընդամենը	Ջրաչափով	678,248	517,418	76.3	31,447	22,850	72.7
	Առանց ջրաչափի	36,628	3,219	8.8	851	9	1.1

Տվյալների բազայում 01.07.2019թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	585,845	292,442	49.9	24,691	5,465	22.1
Մարզեր	264,581	66,715	25.2	11,348	2,001	17.6
Ընդամենը	850,426	359,157	42.2	36,039	7,466	20.7

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 4,935, իսկ մարզերում՝ 1,760 ջրաչափական սարք: Այդ թվում՝ ԵՏԱՏ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 74, իսկ ՄՏԱՏ սպասարկման տարածքում՝ 329 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:
Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ԵՏԱՏ սպասարկման տարածքում ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափների ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափների քանակ	%
գ.Քասախ	2,196	1,531	69.7
գ.Պռոշյան	1,504	8,35	55.5
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	4,976	1,150	23.1

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Հունիս ամսին ջրաչափերի փոխարինման աշխատանքները շարունակվել են Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է՝ Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 5,408, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3,075, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 442, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 621, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 346, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 335 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 585 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը՝ ջրազրկում իրականացնելու նպատակով:
Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	154	249,377	11,523,306
Մարզեր	199	67,184	11,314,783
Ընդամենը	353	316,561	22,838,089

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՈՒՆ

3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված են Երևան քաղաքի հունիս ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը՝ 98.0 %, որը 2 %-ով ավել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:
Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն



	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
	98.6%	98.5%	98.4%	98.5%	98.1%	97.8%	97.7%	98.1%	98.2%	98.3%	98.3%	98.2%
	98.3%	98.3%	98.3%	98.4%	98.2%	98.0%						

Հաշվետու ամսվա ընթացքում շահագործման տարածաշրջանների տնօրինություններում թվով 51 ՃԿՓ-ների վրա տեղադրվել են ճնշման լոգերներ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ՃԿՓ-ներից 12-ն անսարք են: Անսարքությունները վերացվել են համապատասխան ստորաբաժանման կողմից:

Ստորև նեկայացված են որոշ կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լոգերների գրաֆիկները.
(նկարներում պատկերված ուղղահայաց կարմիր գիծը ցույց է տալիս իրավիճակն աշխատանքներից առաջ և հետո):


Էրեբունի հրապարակ - Սարի թաղի գիծ
առաջ
հետո

Այվազովսկի փ. (Էրեբունի հրապարակ)
առաջ
հետո


Գ-3 19 շենքի հարևանությամբ(17 թաղ.)
առաջ
հետո


16 թաղ. 11 շենքի դիմաց
առաջ
հետո


Սարի թաղ 27 փողոց
առաջ
հետո


Մարաշ, 7 և 6 փող. խաչ.
առաջ
հետո

3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էնեգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 18,375 կՎտ/ժ. (4%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր



	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
2018	538,230	469,242	496,832	474,606	480,811	484,118	690,210	554,349	473,004	485,858	518,317	521,999
2019	585,779	505,433	529,776	492,586	474,334	502,494	0	0	0	0	0	0
%	8%	7%	6%	4%	-1%	4%	0%	0%	0%	0%	0%	0%

- Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Ստորև ներկայացված են հունիս ամսվա ընթացքում շեղում ունեցող հասցեներից մի քանիսը.

Հասցե	*Հայտնաբերված թերություններ*	*Ամսական կՎտ/ժամ*
Աշտարակ	հաշվառման սարքի կարգաբերում	140
Աշտարակ	հավելագրում	500
Երևան	հավելագրում	1,500
Ընդամենը		2,140

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 163 հասցե: Երկու հասցեում հայտնաբերվել են հավելագրումներ, որոնց մասին տեղեկացվել են «ՀԷՑ» ՓԲԸ-ի համապատասխան ծառայությունները՝ թերությունները վերացնելու նպատակով, իսկ մեկ հասցեում կատարվել է հաշվառման սարքի կարգաբերում:

Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 1,115 կՎտ/ժ կամ 5 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին

	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
2018	22,511	20,252	21,594	19,433	19,790	20,424	25,855	25,803	24,894	25,167	26,088	25,409
2019	29,720	20,200	29,281	14,771	24,147	21,539						
%	24%	0%	26%	-32%	18%	5%	0%	0%	0%	0%	0%	0%

- Շիրակ քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության շնորհիվ էլ. էներգիայի ծախսը նվազել է 4,257 կՎտ/ժ կամ 15 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ



	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
2018	36,235	31,858	43,476	37,700	38,291	33,292	34,174	36,612	25,309	44,589	38,195	34,453
2019	35,203	31,796	34,062	30,942	30,054	29,035						
%	-3%	0%	-28%	-22%	-27%	-15%	0%	0%	0%	0%	0%	0%

- Հունիս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է ամսական 1,293,238 կՎտ/ժամ կամ 43 % (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
2018	578,307	521,061	620,683	937,203	1,042,476	1,721,429	4,184,452	2,649,496	1,620,769	1,024,056	559,091	621,964
2019	677,048	598,112	646,312	782,608	1,300,899	3,014,667						
%	15%	13%	4%	-20%	20%	43%	0%	0%	0%	0%	0%	0%

- Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը ավելացել է ամսական -3,103,197 կՎտ/ժամ կամ 14 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
2018	2,170,130	1,847,643	2,091,877	1,952,802	1,863,427	2,175,026	3,103,197	2,954,133	2,569,234	2,260,311	1,933,943	1,942,495
2019	2,266,339	1,896,925	1,957,939	1,828,675	1,978,941	2,529,213						
%	4%	3%	-7%	-7%	6%	14%	0%	0%	0%	0%	0%	0%

- Ընդհանուր էլ. էներգիայի ծախսն ավելացել է ամսական 1,688,338 կՎտ/ժ կամ 26 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Ընկերության կողմից սպառած էլ. էներգիա



	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
2018	4,022,988	3,475,261	3,856,809	3,917,491	3,939,762	4,929,410	8,607,199	6,761,362	5,205,126	4,339,627	3,636,288	3,719,155
2019	4,245,339	3,627,803	3,801,851	3,656,640	4,279,966	6,617,748						
%	5%	4%	-1%	-7%	8%	26%	0%	0%	0%	0%	0%	0%

3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են հունիս ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	*Չ/Մ*	*Քանակ*
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում	հատ	215
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում	հատ	5
Նոր կետերի ավելացում՝ ֆիզիկական բաժանորդներ	հատ	162
Նոր կետերի ավելացում՝ իրավաբանական բաժանորդներ	հատ	4
Շահագործումից հանված ջրագիծ	մետր	934
Կառուցված ջրագիծ	մետր	821
Շահագործումից հանված կոյուղագիծ	մետր	12
Կառուցված կոյուղագիծ	մետր	33
Վթարային ջրանջատումներ (համայնքների քանակ)	հատ	4
Պլանային ջրանջատումներ (համայնքների քանակ)	հատ	3
ՀՀ սեփական, բազմաբնակարանային և իրավաբանական բաժանորդների խմբավորման և լրացման աշխատանքներ (ըստ սպասարկման տարածքի, լոգերի և լոգեր գոտիների, ժամային գրաֆիկի), ֆիզիկական բաժանորդների տվյալների մշակում և մուտքագրում բազա	հատ	36,235
Քարտեզների տպագրում (Դավթաշեն) Այցեր տարբեր տեղամասերի սպասարկման տարածքներ՝ ներքին ցանցի ու ջրատարի	հատ	1
վերաբերյալ տվյալների ձեռքբերման և ուղղման նպատակով (Մասիս ՇՏ)	հատ	1
Մոդելավորման աշխատանքներ (փորձնական ընտրվել է Արաբկիրը)	հատ	1

3.4. ԿԱՐԳԱՎԱՐՄԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու ամսում կարգավարների խումբը SCADA և LOCATOR համակարգերի միջոցով առցանց կառավարել և հետևել է ընկերության սպասարկման տարածքում առկա պոմպային ագրեգատների անխափան աշխատանքին, ջրամբարների լցվածությանը, ճնշումային լոգերներին, ջրաչափական սարքերի աշխատանքին և բաշխիչ ցանցի ջրում առկա մնացորդային քլորի համապատասխանությանը սահմանված չափաբաժնին:

Ստորև ներկայացվում է տեղեկատվություն 1 խոշոր վթարի մասին:

- «Մասիս» ՇՏ-ում գտնվող «Նորաբաց» ՕԿՋ-ի մակարդակաչափից ստացված տվյալներից պարզվել էր, որ տվյալ ջրամաբարը սնուցող «Արարատյան» պոմպակայանից դեպի «Նորաբաց» ՕԿՋ կամ «Նորաբաց» ՕԿՋ-ից դուրս եկող ջրատարի վթար է առաջացել: Այդ մասին տեղեկացվել էին «Մասիս» ՇՏ-ի աշխատակիցները, որոնք հայտնաբերել էին վթարի ստույգ վայրը: Վթարվել էր «Արարատյան» պոմպակայանից դեպի «Նորաբաց» ՕԿՋ մղվող ջրատարը:

Ստորև ներկայացված է դեպի Կարմիր գյուղ ջրաչափի գրաֆիկական պատկերը.

«Նորաբաց» ՕԿՋ



3.5. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Արարատյան ջրատար

- Արարատյան ջրատարի վրա՝ օդանավակայանի մոտ գտնվող հատվածում, բացվել է վերջերս տեղադրված նոր փականը, որը փակվել է:
- Արարատյան ջրատարների վրա պարբերաբար առաջանում են վթարներ, որոնք հնարավորինս շուտ վերացվում են:

Խարբերդ ՕԿՋ

- Դեպի Խարբերդ ՕԿՋ ջուր ուղղելուց հետո վթար էր առաջացել «Կոնտինենտալ» ռեստորանի մոտ, որի համար պահանջվել է ջրատարի կանգառ: Վթարը վերացնելուն զուգահեռ նոր փականով է փոխարինվել (D=600մմ) Արգավանդում գտնվող Արզական-Խարբերդ ջրատարի վրա գտնվող (D=1000մմ) չաշխատող փականը համակարգը կառավարելի դարձնելու նպատակով:

Գառնի-Երևան ջրատար

- Գառնի կատարած շրջայցերի ժամանակ Գառնի-Երևան ջրատարի վրա հայտնաբերվել են վթարներ, որոնք վերացվել են առանց կանգառի:

- Բացի այդ, Գառնի ձորում առկա են մի շարք վթարներ, որոնք վերացման փուլում են:

- Կատարվել են նաև Նոյեմբերյան քաղաքը սնող ջրատարների և ցանցի կարգավորման աշխատանքներ:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

4.1. Համակարգչային ցանց

Հունիս ամսվա ընթացքում IT բաժնի կողմից իրականացված հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև՝

- Տեղադրվել և կարգավորվել են երկու նոր դոմենի կառավարման (Domain Controller) սերվերներ Microsoft Windows Server 2016 օպերացիոն համակարգի հիման վրա:
- Սկսվել է դոմենի տեղափոխումը Microsoft Windows Server 2012 օպերացիոն համակարգից Microsoft Windows Server 2016 օպերացիոն համակարգ՝ տեղափոխվել են բոլոր դերերը, DNS ծառայությունները և այլ ծառայությունները:
- Մեկնարկել է սերվերային սենյակի և այդ սենյակում առկա սարքավորումների պատրաստումը նոր սերվերի և տվյալների պահոցի տեղադրման և կարգավորման համար:

4.2 Ինտերակտիվ համակարգ

- Նորագույն տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման խմբի կողմից կատարվել են մի շարք փոփոխություններ և թարմացումներ ինտերակտիվ և փաստաթղթաշրջանառության համակարգերում:
- Տեխնիկական տնօրինության ռազմավարության և մշտադիտարկման վարչության ԱՏՀ խմբի հետ համատեղ մշակվում և ստեղծվում է տվյալների բազա ջրամատակարարման շարունակականությունը հաշվարկելու համար:
- Չափագիտության ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի հետ կնքված նոր կարգի համապատասխան, կատարվել է ամբողջական ծրագրային փոփոխություն, որով հնարավորություն է ընձեռվում ջրաչափերի լաբորատոր եզրակացությունները ստանալ և հաշվարկել նոր հաստատված կարգով:
- Մի շարք հաշվետվություններ են տրամադրվել Ջրային կոմիտեին, ՀԾԿՀ և ընկերության այլ ստորաբաժանումներին:

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ամսվա գլխավոր նորությունը Մամուլի խոսնակի նշանակումն էր Վեոլիա Ջուր ընկերությունում, ով արդեն ավելի կոնկրետ, ամենօրյա ռեժիմով սկսեց կոորդինացնել Հանրային կապերի բաժնի /ՀԿԲ/ աշխատանքը: Դրա շնորհիվ ֆեյսբուքում ընկերության պաշտոնական էջի հրապարակումները դարձան ավելի նպատակաուղղված, ճշգրիտ և պահանջներին համապատասխան: Իսկ որ ամենակարևորն է. կապն ընկերության մյուս ծառայությունների հետ դարձավ ավելի ամուր, ինչը դրականորեն ազդեց ՖԲ-ով սպառողներից ստացվող հաղորդագրություններին տրվող պատասխանների որակի վրա: Այսպիսով, Վեոլիա Ջուր - Սպառող հարաբերությունները դառնում են ավելի ամուր ու արդյունավետ:

Այս ընթացքում համատեղ ուժերով մասնավորապես 4 հեռուստաալիքով ռեպորտաժ է հեռարձակվել Սիսիանում ջրի ապօրինի օգտագործման դեմ պայքարի մասին: ՖԲ-ում հրապարակվել են հաղորդագրություններ համակարգում իրականացվող աշխատանքների ընթացքի մասին: Օրինակ, Գավառ-Սևան ջրատարի վերանորոգման և փականային հանգույցի վերակառուցման վերաբերյալ, Սյունիքի «Մուխուրթուրյան» մայրուղային ջրատարի Սիսիան-Գորիս հատվածում հայտնաբերված ավելի քան 10 վթարների միաժամանակյա վերացման կապակցությամբ, ԶԼՄ-ներին է ուղարկվել Վեոլիա Ջրի պարզաբանումը Կոտայքի մարզի Ալափարս գյուղում ջրամատակարարումից բնակիչների բողոքի վերաբերյալ, ինչպես նաև երկու հրապարակում է ներկայացվել սպառողներին ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում հայտնաբերված ապօրինի ջրագծի մասին:

Բնականաբար, Հանրային կապերի բաժինը հունիսին նաև զբաղվել է ամենօրյա մամուլի տեսության պատրաստմամբ, մշտապես տարաբնույթ մամուլի հաղորդագրություններ է ուղարկել ԶԼՄ-ներին, ընդ որում շատ է եղել ջրանջատումների մասին տեղեկատվությունը, կապ է պահպանվել լրագրողների հետ՝ վերջիններիս բարձրացրած մասնագիտական և անձնական բնույթի հարցերին պատասխանելու համար:

«Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի ՀԿԲ - «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամ» համագործակցությունը շարունակվում է: Վերջինս ներկայումս ձեռնարկում է միջոցներ և հաղորդակցության ծրագիր մշակում ընկերության աշխատանքը հանրությանը ամիս առ ամիս ավելի ցայտուն ու արդյունավետ ներկայացնելու համար: Հետևաբար, առաջիկայում սպասվում է Հանրային կապերի բաժնի աշխատանքի հետագա ակտիվացում:

ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

6.1 Փաստաթղթերի մշակում

● ՌԱԱ Ծառայության պետը, որպես արձանագրող մասնակցեց սույն թվականի հունիս ամսին կայացած Ընկերության Ղեկավար կազմի հրավիրած 3 ժողովին, կազմեց և Ընկերության գլխավոր տնօրենի հաստատմանը ներկայացրեց ժողովների արձանագրությունները:

● Սույն թվականի հունիսի 26-ին «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ում ՌԱԱ ծառայության պետ Դավիթ Ադամյանը մասնակցեց ՏՀ 21 «Համապատասխանության գնահատում և կառավարման համակարգեր» ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի աշխատանքներին, որի շրջանակներում քննարկվեց ՀՍՏ ԻՍՕ 22000-2019 «Սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգեր. Սննդամթերքի արտադրության շղթայում ընդգրկված կազմակերպություններին ներկայացվող պահանջներ» ազգային ստանդարտի նախագիծը:

6.2. Դասընթացներ/սեմինարներ



● Հաշվետու ամսում Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում (ՖՀՄՈՒԿ) շարունակվեց Ընկերության ԵՏԱ տնօրինության 20 մասնագետ տեսուչի մասնագիտական որակավորման և «Արևելք» և «Արևմուտք» տարածաշրջանային տնօրինությունների 19 աշխատակցի համար «Խողովակաշարող» եռամսյա մասնագիտական դասընթացների III փուլը:

● «Նարեկ» գիտահետազոտական ընկերության հետ համատեղ հունիսի 13-ին իրականացվեց Ընկերության Տեխնիկական տնօրինության 10 քլորի օպերատորի, 2 հեղուկ քլոր տեղափոխող ավտոմեքենայի վարորդի, 1 ավտոկռունկավարի մասնագիտական որակավորման դասընթաց, Ընկերության «Արևելք» և «Արևմուտք» տարածաշրջանային տնօրինությունների և Տեխնիկական տնօրինության թվով 17 աշխատակցի էլ. եռակցողներ և գազաեռակցողների մասնագիտական որակավորման դասընթաց և տրվեցին վկայականներ:

● Ծառայությունը հունիսի 13-14-ին կազմակերպեց և իրականացրեց «Շինհրապարակների անվտանգ կազմակերպման պահանջներ» և «ԱՊՄ-ների դերը և կիրառությունը» թեմաներով դասընթացներ Ընկերության «Արևմուտք» տարածաշրջանային տնօրինության 15 աշխատակցի համար:

● Ելնելով Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների և բաժանորդների սպասարկման որակի բարելավման, բաժանորդների սպասարկման գրասենյակի աշխատակիցների և 1-85 հեռախոսակենտրոնի օպերատորների սպասարկման ոլորտի գիտելիքների զարգացման, որակյալ սպասարկման ծառայություն մատուցելու և յուրաքանչյուր բաժանորդի սպասարկման բավարարվածությանը հասնելու, բաժանորդների սպասարկմանը վերաբերող հարցերին որակյալ պատասխաններ տրամադրելու, ինչպես նաև Վարձակալության պայմանագրով սահմանված «ՀԿՑ CS3՝ բաժանորդների բավարարվածություն» ցուցանիշի շարունակական բարելավման անհրաժեշտության պահանջներից Ծառայության կողմից իրականացվեց 1-85 հեռախոսակենտրոնի 17 օպերատորների աշխատանքի որակի մոնիտորինգ:

2018-2019թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



2019թ. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ մասնակցած աշխատակիցների քանակներն ըստ դասընթացների տիպերի

** 2019թ. վերապատրաստված աշխատակիցների որոշ մասը մասնակցել է երկամսյա-եռամսյա դասընթացների:*
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. ՖՀՄՈՒԿ հիմադրամում կազմակերպված երկամսյա-եռամսյա դասընթացներին մասնակցել է Ընկերության 115 աշխատակից

6.3. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում

● Ծառայության անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին պլանավորված Անվտանգության ստուգայցներ թվով 9 («Ալափարս», «Մաքրավան-2», «Մաքրավան-4», «Լճաշենի», «Հացառատ», «Սարուխան», «Գանձակ», «Գոլովինո», «Ֆրոլով-Բլդան») քլորակայանում, թվով 7 («Ալափարս», «Մաքրավան-2», «Մաքրավան-4», «Գոմաձոր», «Հացառատ», «Սարուխան», «Գանձակ») պոմպակայանում, 3 («Գոլովինո», «Ֆրոլով», «Բլդան») ՋՄԿ, 3 («Գավառ», «Մարտունի», «Դիլիջան») ԿՄԿ, «Լճաշենի» խորքային հորերի տարածք և 2 (Գավառի առևտրային և շահագործման տեղամասեր) վարչական շենք:

● ՈԱԱ Ծառայության կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, էքսկավատորի անվտանգ շահագործման ուղղությամբ:



«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am